Կ Ա Ր Ծ Ի Ք

ԱՍՏՂԻԿ ՌՈԲԵՐՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ «ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՃԿՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՊՏԻՄԱԼ ՄՈԴԵԼԸ ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԺԳ.00.01-«ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հանրակրթության ոլորտի համակարգային հիմնախնդիրների հաղթահարման և հանրակրթական դպրոցի կառուցվածքային առողջացման գիտականորեն հիմնավորված ուղիներից է կառավարման ճկուն մեթոդաբանության տեղայնացումն ու մանկավարժայնացումը: Թեև ճկուն մոդելները լայնորեն կիրառվում են բարձր տեխնոլոգիաների և տնտեսության ոլորտներում, իսկ կրթական միջավայրում դրանց ներդրման հայեցակարգային անհրաժեշտությունը վերջին շրջանում սկսել է քննարկվել հայաստանյան հանրակրթության համատեքստում, այդուամենայնիվ դրանց կառուցվածքագործառութային ամբողջական մոդելավորումը մնում է չուսումնասիրված: Բացակայում են համապարփակ հետազոտություններ, որոնք կբացահայտեն հանրակրթական դպրոցում ինքնակազմակերպվող մանկավարժական կոլեկտիվների, ղեկավարի օժանդակող գործառույթի և տվյալահեն որոշումների կայացման համազդեցիկ մեխանիզմները: Կառավարման ավանդական համակարգի գործնական սահմանափակումները և հանրակրթության ոլորտում ճկուն կառավարման մանկավարժական օպտիմալ մոդելի մշակման հրատապությունը պայմանավորում են սույն հետազոտության թեմայի արդիականությունը: Հիմնախնդրի վերաբերյալ մանկավարժագիտական, պատմագրական, ազգագրական, փիլիսոփայական, մարդաբանական, հոգեբանական, հրապարակախոսական, գիտական գրականության, բանահյուսության, ազգային ավանդույթների ու սովորույթների ուսումնասիրությունը Աստղիկ Վարդանյանին հնարավորություն է ընձեռել վեր հանել հիմնախնդրի վերաբերյալ առկա տարբեր տեսակետների համակարգվածության աստիճանը:

Ներածության մեջ բավականին ճշգրիտ է կատարված արդիականության հիմնավորումը, հստակ ձևակերպված են ատենախոսության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը:

Աշխատանքը կազմված է 143 էջում ամփոփված՝ ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, առաջարկություններից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսությունը բովանդակում է նաև հավելված: Գրականության ցանկում նշված է 134 աղբյուր: Օգտագործված գրականությունը համապատասխանում է ատենախոսության թեմային:

Ատենախոսությունը տրամաբանական առումով կառուցված է ճիշտ: Հետազոտության շարադրանքը համապատասխանում են գիտական հետազոտությանն առաջադրվող հիմնական պահանջներին:

Ատենախոսության «Կրթական գործընթացի կառավարման ճկուն մեթոդաբանության տեսական և համեմատական վերլուծություն» առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից, որտեղ ներկայացված են կրթության կառավարման հարացույցների զարգացումը և ճկուն կառավարման գիտատեսական հիմքերը, արտերկրի կրթական համակարգերում ճկուն կառավարման մոդելների համեմատական վերլուծությունը և տեղայնացման հնարավորությունները ՀՀ–ում, ղեկավարման սոցիալ-հոգեբանական մեխանիզմները և կառավարչական կոմպետենցիաներն արդի մարտահրավերների համատեքստում:

Ատենախոսն իրավացիորեն գտնում է, որ ավանդական, կարծրացած կառավարման հարացույցից անցումը դեպի ճկուն կառավարում պատմական և սոցիալական անհրաժեշտություն է արդի կրթական համակարգի համար: Տեսական և համեմատական վերլուծություններն ապացուցում են, որ այս վերափոխումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ դպրոցի ղեկավար կազմը և ուսուցիչները տիրապետում են բարձրագույն մետակոմպետենցիաներին՝ հուզական ինտելեկտին, կոգնիտիվ ճկունությանը և քննադատական մտածողությանը:

Ինտերակտիվ տեխնոլոգիաների կիրառումը թույլ է տալիս կառուցել վստահության, համագործակցության և ապակենտրոնացված որոշումների կայացման վրա հիմնված կենսունակ կառավարչական էկոհամակարգ: Այս գիտատեսական և մեթոդաբանական հիմքերը հենարան են հանդիսանում ՀՀ հանրակրթական դպրոցի կրթական գործընթացի ճկուն կառավարման կոնկրետ մանկավարժական մոդելի մշակման և դրա գործառութային բնութագրման համար:

Ատենախոսության երկրորդ՝ «Հանրակրթական դպրոցի կրթական գործընթացի ճկուն կառավարման մանկավարժական մոդելի մշակումը և գործառնական բնութագիրը» գլուխը բաղկացած է չորս ենթագլխից: Գլխում պատկերավոր

ներկայացված են կրթական գործընթացի ճկուն կառավարման կառուցվածքային-գործառութային մոդելը, մասնագիտական զարգացման ենթահամակարգի կառավարումը, հանրային ներգրավվածության և գործընկերային հարաբերությունների ճկուն կառավարման մեխանիզմները, կրթական գործընթացի ճկուն կառավարման տեխնոլոգիական ապահովումը:

Ըստ ատենախոսի, կրթական գործընթացի ճկուն կառավարման համակարգում տեխնոլոգիական և հումանիտար գործիքակազմի ներդրումը դրական տեղաշարժերի հետ մեկտեղ առաջադրում է կառավարչական նորագույն մարտահրավերներ: Ատենախոսը հիմնավորում է, որ տեխնոլոգիան ինքնին ո՛չ նպատակ է, ո՛չ էլ համադարման. այն սոսկ միջավայր է, որը պահանջում է խիստ գիտակցված, էթիկական և հոգեբանորեն հավասարակշռված կառավարում: Արդի մանկավարժագիտության մեջ աճում է այն համոզմունքը, որ առանց ռիսկերի խորքային ախտորոշման՝ թվայնացումը կարող է հանգեցնել կրթական համակարգի մեքենայացման և մանկավարժական ստեղծագործականության ճնշման: Այս առումով էլ ատենախոսի կողմից մշակված մոդելն ամբողջանում է տեխնոլոգիական ռիսկերի կանխարգելման և գնահատման ճշգրիտ չափանիշներով:

Ատենախոսության երրորդ գլխում ներկայացված է հանրակրթական դպրոցում կրթական գործընթացի ճկուն կառավարման օպտիմալ մոդելի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների անցկացումն ու արդյունքների վերլուծությունը:

Հետազոտության էմպիրիկ բազան ձևավորվել է ՀՀ տարբեր մարզերի հանրակրթական հաստատությունների հենքի վրա: Ախտորոշիչ սոցիոլոգիական հարցումների բազան կազմել են ՀՀ Շիրակի մարզի Գյումրու թիվ 8, Լանջիկի, Կամոյի, Երազգավորսի միջնակարգ դպրոցները, թիվ 5, 9, 10, 11, 15, 20, 41 հիմնական դպրոցները, Գյումրու «Օյունջյան» միջնակարգ դպրոց-վարժարանը, Ոսկեհասկի միջնակարգ դպրոցը, Գյումրու ակադեմիական և Ֆոտոն վարժարանները, Արարատի մարզի Ղուկասավանի, Արմավիրի մարզի Հովտաշենի, Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան միջնակարգ դպրոցները, Ախուրյանի Ն. Աղբալյանի անվան, Կապանի թիվ 2, Հրազդանի Լ. Խեչոյանի անվան թիվ 10, Արթիկի թիվ 3 ավագ դպրոցները:

Հետազոտությանը մասնակցել է ընդհանուր առմամբ 450 հոգի , որոնք բաշխվել են հետևյալ թիրախային խմբերում. 310 մանկավարժ (ուսուցիչներ և դասղեկներ), 45

վարչական աշխատող (տնօրեն, փոխտնօրեն) և 95 ծնող (ներառյալ դպրոցի կառավարման և ծնողական խորհրդի անդամներ):

Ատենախոսի կողմից մշակված կրթական գործընթացի ճկուն կառավարման մոդելի գնահատումն ու վավերացումն իրականացվել են նպատակային ընտրանքով առանձնացված բազայում՝ ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու Ֆոտոն վարժարան» ՊՈԱԿ, ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու Ակադեմիական վարժարան» ՊՈԱԿ, ՀՀ ԿԳՄՄՆ «Ախուրյանի Ն. Աղբալյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ, ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 20 հիմնական դպրոց» ՊՈԱԿ, ՀՀ Շիրակի մարզի «Ոսկեհասկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, ՀՀ Շիրակի մարզի «Լանջիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, ՀՀ Շիրակի մարզի «Երազգավորսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի հ. 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ հենքի վրա՝ հիմնվելով սոցիոլոգիական հարցումների, նպատակային խմբերի քննարկումների և խորքային հարցազրույցների վրա: Հետազոտության հավաստիությունն ապահովելու նպատակով սոցիոլոգիական աշխատանքը բաժանվել է երկու հիմնական հաջորդական փուլի՝ ելակետային-ախտորոշիչ հարցում (նախքան մոդելի հայեցակարգային ներկայացումը) և ամփոփիչ-գնահատողական հարցում (նպատակային խմբերում մոդելի էության և հնարավորությունների մանրամասն ներկայացումից և վերլուծությունից հետո): Վիճակագրական համադրելիությունն ապահովելու համար համեմատական վերլուծության հիմքում դրվել են նպատակային խմբերում առանձնացված 310 մանկավարժի և կառավարչական աշխատողի տվյալները՝ նախքան մոդելի ծանոթացումը և դրանից հետո:

Ատենախոսն ամփոփելով ելակետային-արձանագրող փուլի սոցիոլոգիական վերլուծությունը հանգել է գիտական փաստարկի. ՀՀ հանրակրթական դպրոցի կառավարման գործող մեխանիզմը տառապում է համակարգային կոշտությունից, որը ոչնչացնում է մանկավարժական նորարարությունը և օտարում է հասարակությանը:

Ատենախոսության հետազոտության ելակետային փուլում իրականացված սոցիոլոգիական դիագնոստիկան ի հայտ է բերել ավանդական՝ խիստ ուղղահայաց կառավարման համակարգում առկա լրջագույն հակասությունները:

Հետազոտության հավաստիությունն ապահովելու նպատակով ատենախոսը հարցումներ է իրականացրել առանձնացված նպատակային խմբում (155

մանկավարժ և կառավարիչ)՝ կիրառելով ելակետային փուլի նույն հարցարանները, որը թույլ է տվել իրականացնել խորքային համեմատական վերլուծություն և վերհանել այն տեղաշարժերը, որոնք պայմանավորված էին մոդելի գործիքակազմի յուրացմամբ: Իրականացված հետազոտությունը հիմնավորել է տեսական մոդելի ճշմարտացիությունը՝ ապացուցելով կառավարման համակարգի կառուցակարգային առողջացումը, ինչը սովորողի առաջընթացի բազային նախապայմանն է:

Ատենախոսության 6 եզրակացություններում ամփոփված են աշխատանքի արդյունքները: Եզրակացությունը հավաստում է նպատակի իրականացված լինելը, դրված խնդիրների լուծված լինելը, հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսությունը բովանդակում է գիտագործնական երեք առաջարկություն:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է սեղմագրում և հեղինակի գիտական աշխատանքներում:

Աստղիկ Վարդանյանը հետազոտական ծրագիրն իրագործել է գիտական պատշաճ մակարդակով: Ատենախոսությունն աչքի է ընկնում խորը վերլուծությամբ, ձևակերպված և լուծված խնդիրներով:

Սակայն, ատենախոսությունը զերծ չէ մասնակի թերություններից և բացթողումներից՝

1. ատենախոսն օգտագործում է «քննական մտածողություն» տերմինը «քննադատական մտածողություն» փոխարեն, որն իրավագիտական իմաստ ունի:
2. Օգտագործված գրականության ցանկում որոշ աղբյուրների էջերի թիվը բացակայում է, օրինակ՝ Ասատրյան Լ.Թ., Ասատրյան Մ.Ա. և Սաֆարյան Ն.Ա. (2021): Դպրոցի կառավարման հիմունքները: Ուսումնամեթոդական ձեռնարկ. Արտագերս, որոշ գրականությանն առնչվող տվյալները թերի են, օրինակ՝ Бейтсон, Г. (1972). Шаги в направлении экологии разума, կամ Гольман, Д. (1995). Эмоциональный интеллект: և այլն:
3. Ճիշտ կլիներ երրորդ գլուխը բաժանել երկու ենթագլխի՝ առաջինում նկարագրվեր հետազոտությունների նախապատրաստումը, երկրորդում՝ դրանց իրականացումը և վերլուծությունը:
4. Թեմայի արդիականության հիմնավորումը ծանրաբեռնված է տարբեր հետազոտողներից մեջբերումներով:

5. Առկա են տեխնիկական և համակարգչային թերություններ:

Սակայն, այդ թերություններն ու բացթողումները չեն ազդում ատենախոսության իրական գիտական արժեքի վրա:

Ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական գիտական հետազոտությանն առաջադրվող հիմնական պահանջներին:

Աստղիկ Ռոբերտի Վարդանյանի «Կրթական գործընթացի ճկուն կառավարման օպտիմալ մոդելը ՀՀ հանրակրթական դպրոցում» թեմայով ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն գիտամանկավարժական աշխատանք է: Ատենախոսությունն աչքի է ընկնում թեմայի հիմնավորվածությամբ, արդիականությամբ, հետազոտության բովանդակությամբ, դրված խնդիրների լուծման արդյունավետությամբ: Հետազոտության նորույթը կասկած չի հարուցում:

Աստղիկ Ռոբերտի Վարդանյանի «Կրթական գործընթացի ճկուն կառավարման օպտիմալ մոդելը ՀՀ հանրակրթական դպրոցում» թեմայով ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը բավարարում է ՀՀ գիտական աստիճանների շնորհման կանոնակարգի 7–րդ կետի պահանջները, իսկ հեղինակն արժանի է իր կողմից հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ Հ.Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ Հ.Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ԳԱԱ ԳԿՄԿ ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ. ՍԱՐԳՍՅԱՆ
(կազմակերպության գիտ. քարտուղար) *(ստորագրություն և կնիք)*